ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՏՁՀ-ՆԾ-ՀՄԱԾՁԲ-2025/1

ք. Երևան «3» 12 20 թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս **հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Ինտերէներգիա» ՍՊԸ-ն**, ի դեմս **տնօրեն Հայկ Եսայանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 11 մանկապարտեզի ճակատների երեսապատման և փարածքի բարեկարգման վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման*** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1 700 000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական

համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	**«Ինտերէներգիա» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղ., 12/70
ՀՎՀՀ՝00846441 Հ/Հ՝ 900011061265	ՀՎՀՀ՝01847856 Հ/Հ՝ 220290123532000 «Ակբա բանկ» ԲԲԸ Տնօրեն՝ Հայկ Եսայան
Կենտրոնական գանձապետարան Գործադիր տնօրեն Մ. Բաղդասարյան _____ /ստորագրություն/ Կ.Տ	_____ /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
« 3 » 12 2025 թ. կնքված
ՀՏՀՀ-ՆԾ-ՀՄԱԾՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71241200/47	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում համաձայն N 1.1 հավելվածի	դրամ	1 700 000	1	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31	*Կողմերի միջև պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ՝ 100 օր*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900011061265

Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Մ. Բարիևյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ինտերէներգիա» ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,
Դավիթաշեն 3-րդ թաղ., 12/70

ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 220290123532000
«Ակբա բանկ» ԲԲԸ
Տնօրեն՝
Հայկ Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
« 3 » 12 2025 թ. կնքված
ՀՏՀՀ-ՆԾ-ՀՄԱԾՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 11 մանկապարտեզի ճակատների երեսապատման և տարածքի բարեկարգման վերականգնման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների

1	**Օբյեկտի համառոտ նկարագիրը (փաստացի վիճակը), տեղակայման վայրը**	ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի թիվ 11 մանկապարտեզը բաղկացած է երկու երկհարկանի, 41,6x12,6 արտաքին չափերով մասնաշենքերից, որոնք միմիանց հետ միացված են 14,8x3,8 չափերով տաք անցումներով: 2017-2022 թ երկու ծրագրով կատարվել են մանկապարտեզի սեյսմազինվզծության բարձրացման, տանիքների, դռների և պատուհանների փոխարինման, ներքին հարդարման , ինժեներական ցանցերի վերակառուցման, շենքի ջերմամեկուսացման աշխատանքները: Անցած տարիների ընթացքում մանկապարտեզի ճակատների սվաղի վրա առաջացել են բազմաթիվ ճաքեր, ներկի շերտը առանձնացել և թափվել է: Մանկապարտեզի արտաքին տեսքի վերականգնման համար նախատեսվում է բոլոր մասնաշանքերի ճակատները երեսապատել 10 մմ հաստությամբ ֆիբրոցեմենտե սալերով, մետաղական հիմնակմախքի վրա, պահպանելով արտաքին ջերմամեկուսացման շերտը և սվաղը: Առանձին հատվածներում՝ մուտքային հանգույցներ, որոշ պատուհանների երիզվածքներ, քիվեր և այլն, ելնելով ճարտարապետական լուծումներից, կարող են օգտագործվել նաև երեսապատման այլ նյութեր: Անհրաժեշտ է վերականքնել նաև մանկապարտեզի շենքին հարող տարածքի բարեկարգումը, փոխարինելով մայթերի քայքայված սալաքարերը, եզրաքարերը, ապահովել ջրահեռացումը, անհրաժեշտության դեպքում նախատեսել նաև ասֆալտի և այլ ծածկույթների քայքայված հատվածների վերականգնումը:
2	**Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ**	**Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝** ճարտարապետահատակագծային առաջադրանք **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք - «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 21-ի N 12-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» , - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմեր, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր, - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի

		դեկտեմբերի 10-ի N 95-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03- «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմեր, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 78-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմեր, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմեր, - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմեր, - ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրաման, - ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N 167-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր, - ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշում:
3	**Նախագծման փուլերը**	Նախագծային փաստաթղթերը մշակել մեկ՝ **«Աշխատանքային նախագիծ»** փուլով: Տարածքի բարեկարգման և ճակատների էսքիզային տարբերակները նախապես համաձայնեցվում Պատվիրատուի հետ: Աշխատանքային գծագրերը մշակվում են համաձայնեցված էսքիզային տարբերակի հիման վրա:
4	**Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը**	Հանձնարարության ընթացքում խորհրդատուն պարտավորվում է կատարել հետևյալ պարտականությունները. **Խորհրդատուի գործունեության հիմնական շրջանակներն են՝** - նախագծային փաստաթղթերի մշակում ՀՀ օրենսդրության, նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, տեխնիկական, ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներին համապատասխան, - ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծի համաձայնեցում բոլոր շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ, - Անհրաժեշտության դեպքում, <Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ նախագծի ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ***Խորհրդատուն պարտավոր է՝*** 1) նախագծային առաջադրանքի մշակման ընթացքում օժանդակել Պատվիրատուի մասնագետներին և տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ նախատեսվող կառուցապատման աշխատանքներին ներկայացվող նորմատիվ պահանջների վերաբերյալ,

		2) մասնակցել և աջակցել ՀՀ օրենսդրության համաձայն նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային լսումների աշխատանքներին, 3) համագործակցել ինժեներական գծերը տնօրինող մատակարար կազմակերպությունների հետ, համաձայնեցնել նրանց հետ գոյություն ունեցող գծերի տեղափոխման, ստորգետնյա եղանակով վերատեղադրման նախագծային առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի աջակցությամբ ստանալ նաև տեխնիկական պայմաններ 4) Մինչև աշխատանքային գծագրերի մշակումը, բոլոր նախագծային լուծումները համաձայնեցնել Պատվիրատուի հետ, ներկայացնելով լուծումների էսքիզային տարբերակներ, 5) հաշվի առնելով պատվիրատուի դիտողությունները և մեկնաբանությունները, կատարել համապատասխան փոփոխություններ նախագծում, 6) հաշվի առնել նախագծի փորձաքննության /փորձաքննությունների (քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և փորձաքննություն, տեխնիկական անվտանգության փորձաքննություն և այլն) դիտողություններն ու առաջարկությունները և դրանց համապատասխան նախագծում կատարել փոփոխություններ/ճշգրտումներ:
5	**Նախագծի կազմը**	Նախագծային փաստաթղթերի փաթեթը պարտադիր պետք է պարունակի. Ելակետային նյութեր և այլ փաստաթղթեր /Ա-0 ալբոմ/, այդ թվում՝ - Նախագծող կազմակերպության աշխատակազմ, լիցենզիաներ, արտոնագրեր - Ճարտարապետահատակագծային առաջադրանք /տրամադրում է Պատվիրատուն/ - Բարեկարգվող տարածքի տեղագրական հանույթ, 1:500, - Նախագծի համաձայնեցումներ համայնքի, և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ, Ընդհանուր բացատրագիր **Գլխավոր հատակագիծ** Տարածքի բարեկարգման նախագիծ, ներառյալ մայթերի ևճանապարների պատվածքի, հետիոտնային արահետների, թեքահարթակների, ճարտարապետական և կոնստրուկտիվ լուծումներ, հանգույցներ, մասնագրեր **Ճարտարապետաշինարարական մաս** Բոլոր ճակատների չափագրական գծագրեր: Ճակատների երեսապատման գծագրեր, նշելով նյութը, երեսապատման սալերի բաժանումները, չափերը: Երեսապատման սալերի մետաղական հիմնակմախքի ճակատների վրա տեղադրման գծագրեր, նշելով գայլը, ամրացման եղանակները չափերը: Մետաղական հիմնակմախքի և երեսապատման սալերի ամրացման մանրամասն հանգույցներ, նեռարյալ բացվածքների երիզվածքների երեսապատման հանգույցները: **Ինժեներական ցանցեր**

		Արտաքին էլեկտրալուսավորություն Էլեկտրամատակարարում (արտաքին) Շինարարության, այդ թվում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպման նախագիծ Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումներ / թեքահարթակներ, հատուկ սալահատակ, նշագծում և այլն/ Շինարարական աշխատանքների ծավալաթերթ, նախահաշիվ, ծավալաթերթ - նախահաշիվ
6	**Այլ պահանջներ**	**Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** - Ավարտված նախագիծը ներկայացնել պարզ փորձաքննության - նյութերի, սարքավորումների շահագործման առավելագույն ժամկետ, - Նախագծով նախատեսված սարքավորումների ցանկ, Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների, սարքավորումների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները: **«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ» ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 6 օրինակ՝ փաստաթղթային և էլեկտրոնային՝ AUTO CAD և PDF, նախահաշիվը՝ EXCEL տարբերակներով: Բոլոր նյութերը ներկայացնել երկլեզու՝ հայերեն և ռուսերեն:
7	**Խորհրդատուի աշխատանքների ընդունման կարգը**	Պատվիրատուի կողմից ավարտված նախագծի վերջնական ընդունումը, հանձնման-ընդունման ակտի ձևակերպումը կկատարվի՝ նախագծի վերաբերյալ քաղաքաշինական փաստաթղթերի պարզ և համալիր փորձաքննության դրական եզրակացություն ստանալու դեպքում (ներկայացնում է Պատվիրատուն):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝900011061265

Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Ս. Բաղդասարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ինտերէներգիա» ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,
Դավիթաշեն 3-րդ թաղ., 12/70

ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 220290123532000
«Ակբա բանկ» ԲԲԸ
Տնօրեն՝
Հայկ Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«3» 12 2025 թ. կնքված
ՀՏՀՀ-ՆԾ-ՀՄԱԾՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/47	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	0	0	0	0	0	0	0	0	0	0	1 700 000	1 700 000	1 700 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝900011061265

Կենտրոնական գանձապետարան
Ստորագրության տեսակը՝
Ս. Քարիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ինտերէներգիա» ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան,
Դավիթաշեն 3-րդ թաղ., 12/70

ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 220290123532000
«Ակբա բանկ» ԲԲԸ
Տնօրեն՝
Հայկ Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 2025 թ. կնքված
ՀՏՀՀ-ՆԾ-ՀՄԱԾՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2025 թ. կնքված
ՀՏՀՀ-ՆԾ-ՀՄԱԾՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« » 2025 թ. կնքված
ՀՏՀՀ-ՆԾ-ՀՄԱԾՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.